ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2014 թվականի N 342-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՐԳԵԼԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 702-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ ընկերություն)՝ 2014 թվականի սեպտեմբերի 02-ից մինչև սեպտեմբերի 05-ը ներառյալ ընկերությունում համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կոմիտաս Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Ստեփանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

4) ***Ամատունի Արշակյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2013 թվականի համար ներկայացված ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններում տեղ գտած տեղեկությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, ընկերության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ստացման, ձեռք բերման, հատկացման և հաշվետվությունների ներկայացման, ընտանեկան բժշկի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման կանխարգելիչ ծրագրերի (սկրինինգների) չափորոշիչին համապատասխանության, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, զուտ շահույթի տնօրինման, շահութաբաժնի հաշվարկման և վճարման, ընկերության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացների գնահատման նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի սեպտեմբերի 01
ք. Հրազդան